
**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻ ՃՇԳՐՏՈՒՄ «ՊԱՂՏԱՍԱՐ ԱՂԲԱՐ»-Ի
ԱՌԻԹՈՎ**

ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ

Հակոբ Պարոնյանի ստեղծագործությունը XIX-XXI դարերի շառավիղներում անվարան ապացուցել է իր խոր կենսունակությունն ու վերժամանակյա բնույթը: Այսօր էլ ապրում են հայոց ճակատագրի տնօրինությունն ստանձնած նրա «ազգային երևելիներից» շատերը, նյութական կարիքից դրդված՝ երկու տերերի ծառայող Կոմիկը, արևելյան թերուս ու աճաքարար ատամնաբույժը՝ Թափառնիկոսը, ամուսնական դավաճանության միամիտ գոհը՝ Պաղտասար աղբարը, գավառից մայրաքաղաք «հյուրախաղերի» եկած բթամիտ մեծահարուստը Աբիստողոմ աղան, իսկ «ազգային ջոջեր» արտահայտությունն ու «մեծապատիվ մուրացկաններ» թևավոր խոսք դարձած օքսիմորոնը վաղուց հասարակ անուններ են: Այդ ամենի հետ միասին, սակայն, երգիծաբանի գլուխգործոց երկերում սակավ չեն նաև դիպուկ և իմաստաբանորեն ծանրաբեռնված այնպիսի նախադասություններ ու արտահայտություններ, որոնք, ստեղծված լինելով կոնկրետ առիթներով, ունեն ընդհանրացման բացառիկ ուժ և պահպանում են իրենց արդիականությունը բոլոր ժամանակների համար:

Այդ տեսակետից բավական տպավորիչ նյութ է տալիս «Պաղտասար աղբար» կատակերգությունը՝ հայ դրամատուրգիայի գլուխգործոցներից մեկը: Մեկդի թողնելով պիեսի գաղափարագեղագիտական բազում արժանիքները՝ կենտրոնանանք այնտեղ քանիցս կրկնվող՝ **«նրբացուցիչ դեպք հանցանաց»** վաղուց հայտնի դարձվածքի վրա (ֆրանս.՝ «Circonstances atténuantes»)¹ և այդ առիթով փորձենք կատարել բանասիրական մի ճշգրտում: Խնդրո առարկա դարձվածքը, կարծում ենք, **«Ինձի Պաղտիկ կ'ըսեն»** արտահայտության հետ միասին կազմում է ամբողջ կատակերգության համն ու հոտը: Դրանք երկուսն էլ, թևավոր արտահայտություն դարձած, Պարոնյանի շնորհիվ գրականությունից իջել են կյանք, մտել հայ մարդկանց կենցաղն ու առօրյան. առաջինը հեզնանքով օգտագործվում է, երբ մեղանշողը ծիծաղելի ջանքերով փորձում է արդարացնել, նրբացնել կամ մեղմացնել մեղքի իր բաժինը, իսկ երկրորդը, երբ միամիտ մարդն այդպես էլ չի հասկանում իր դրու-

¹ Այն նաև իրավաբանական հասկացություն է, որը նշանակում է «պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ»:

թյան ամբողջ ծիծաղելիությունը, խաբվածությունն ու բթամտությունը և պատեհ-անպատեհ պարծենում է ու հոխորտում²:

Որքան էլ զարմանալի է, հարցի պատմության վրա լույս է սփռում մեզ իրենից արդեն 132 երկար ու ձիգ տարիներ բաժանող ուշարժան մի նյութի մշուշոտ ակնարկ: Խոսքը վերաբերում է «Պաղտասար աղբար» կատակերգության առաջին գրախոսությանը, որը 1887-ին «Եսթեր» ստորագրությամբ տպագրվել է Հակոբ Պարոնյանի խմբագրած «Խիկար» հանդեսի մայիսյան համարում՝ «**Պաղտասար Աղբար** կատակերգութեան վրայ քննադատութիւն» խորագրով³: Այն ըստ էության հանրածանոթ թատերգության առաջին լրջմիտ արձագանքն էր, իսկ դրա հեղինակն էլ Պարոնյանի հարազատ քեռորդին էր՝ Բանասեր Մաքսուտ Սանտալճյանը⁴:

Բազմաթիվ կողմերով շահեկան այդ գրախոսության հեղինակն անկեղծորեն ջանում է հնարավորինս հանգամանալից ու անաչառ մեկնաբանել կատակերգությունը, որը նրան, ցավոք, միշտ չէ, որ հաջողվում է:

Այսպես, հավանելով ու առանձնակի կարևորություն տալով կատակերգության առաջին արարվածի չորրորդ տեսիլում Պաղտասար աղբարի՝ կնոջ անհավատարմության հանգամանքների մասին փաստաբան Օգսենի հետ խորհրդակցությանը, գրադատը հաջորդ պահին մեզ համար շատ անսպասելի հանկարծ հարվածում է հենց **ստեղծագործական գյուտին**՝ գրելով, որ այնտեղ կա «կէտ մը գոր թերի լինել կը կարծեմ: Հեղինակն, այսպէս ըսեմ, պատմական **մեծ կարևորութիւն կ'տայ կարծես գրագէտի մը մէկ սխալին**: Հասկցաք թէ **նրբացուցիչ** բառին վերայ է խնդիրն: **Ընթերցողն ի՞նչ պիտի հասկնայ**, եթէ չը գիտնայ թէ հեղինակն համակարծիք չէ Պ. Նորայրի՝ «Նրբացուցիչ դէպքի» մասին: Հեղինակութեան մը մէջ ամեն բառ և ամեն կարծիք հեղինակին կը վերաբերին, ի բաց առեալ պատմական բացայայտ ակնարկութիւններն և բառերը: Օգսեն շատանալու էր ծաղրելով «մեղմացուցիչ պարագայները» և մէկդի թողուլ նրբացուցիչ դէպքն որ տեղ տեղ կը կրկնուի»⁵ (ընդգծումները մերն են – Ալ. Մ.):

Ինչպէս նկատելի է, գրադատը մակերեսորեն է նայում երևույթին՝ դրա տակ հասկանալով սոսկ «պատմական փաստը»: Այստեղ տեղին է հիշել ակադեմիկոս Արսեն Տերտերյանի մի կարևոր դիտարկումը՝ կապված երգիծաբանի գեղագիտական ընկալումներից հենց այդ մեկի՝ իրականի ու երևակայականի հարաբերակցության հետ, այն է՝ Պարոն-

² «Ինձի Պաղտիկ կ'ըսեն» արտահայտության և գրական աղբյուրների մասին տե՛ս **Ալ. Մակարյան**, Կրկին Պարոնյանի հետ (ևոր ընթերցումներ), Եր., 2018, էջ 65-68:

³ Տե՛ս «**Խիկար**», հանդէս ամսեայ, Կ. Պոլիս, 1887, մայիս, էջ 311-319:

⁴ Այդ մասին մանրամասն տե՛ս **Ալ. Մակարյան**, Հակոբ Պարոնյանի «Պաղտասար աղբար» կատակերգության առաջին գրախոսության իմացական արժեքը, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», № 3, Եր., 2018, էջ 3-22:

⁵ «**Խիկար**», 1887, մայիս, էջ 316:

յանը միշտ հասկացել է, որ «պետք է տալ ոչ թե սոսկ փաստը, այլ փաստի բանաստեղծությունը, այսինքն՝ պետք է հանդես բերել ընդհանրացնելու մեծ ուժ»⁶: Չէ՞ որ ստեղծագործական գյուտը կարող է ծնվել թե՛ մանրուքից, թե՛ տևական որոնումներից ու մեծ չափով կախված է հեղինակի ներքին այրումից, դիտողականությունից, սրատես հայացքից և ի վերջո՝ վավերականի ու գեղարվեստականի հարաբերակցության այնքան կարևոր գեղագիտական ճաշակից և վարպետությունից: Պարոնյանի մեծությունն էլ հենց այն է, որ թվացյալ «աննշան նյութի» հմուտ կիրառությամբ ստեղծել է դրության ու խոսքի կոմիզմով շաղխված հետևյալ հրաշալի պատկերը.

«ՕԳՍԵՆ – Այդ անպատիվ դուռն կոտրելով ու խորտակելով՝ ներս մտած է, թե դուռը բաց գտնելով ներս մտած է:

ՊԱՂՏԱՍԱՐ – Ինչո՞ւ պետք, բավական է, որ մտած է հոն:

ՕԳՍԵՆ – Ինձի պետք է այս պարագան, կ'աղաչեմ որ ըսեք:

ՊԱՂՏԱՍԱՐ – Տեր ողորմյա, ի՞նչ գիտնամ ես... Բայց դուռը կոտրելու և խորտակելու հարկ չկա:

ՕԳՍԵՆ – Ապա ուրեմն բաց գտած է դուռն ու ներս մտած է, ահա նրբացուցիչ դեպք հանցանաց մը... տեսա՞ ք...:

ՊԱՂՏԱՍԱՐ – Ի՞նչ կա... ո՞վ է նրբացուցիչ դեպք հանցանաց մը...

ՕԳՍԵՆ – Այսինքն դեպք մ'որ հանցանքը կը նրբացնե, կը բարակցնե...:

ՊԱՂՏԱՍԱՐ – Վերջը ի՞նչ կ'ընեն այդ բարակ հանցանքը...:

ՕԳՍԵՆ – Բարակ հանցանքին պատիժն ալ բարակ կ'ըլլա:

ՊԱՂՏԱՍԱՐ – Չեմ հասկնար բարակ հանցանքեն, հաստ հանցանքեն:

ՕԳՍԵՆ – Փաստաբանական լեզվով **նրբացուցիչ դեպք հանցանաց** կ'ըսվի:

ՊԱՂՏԱՍԱՐ – Խելքս չբռնեց:

ՕԳՍԵՆ – Գաղղիերեն՝ սիրքոնսդանս ադենյուանդ:

ՊԱՂՏԱՍԱՐ – Չեմ կրնար ըմբռնել:

ՕԳՍԵՆ – Իտալերեն՝ չիրքոսդանցա ադդենուանդե:

ՊԱՂՏԱՍԱՐ – Իտալերեն չեմ գիտեր:

ՕԳՍԵՆ – Ալմաներեն՝ միլտերունկս կրունտ:

ՊԱՂՏԱՍԱՐ – Ուրիշ կերպով մը հասկցո՞ւր:

ՕԳՍԵՆ – Հունարեն՝ էլաֆրինթիթի բերի՛ սդասիս:

ՊԱՂՏԱՍԱՐ – Բերիսդասիսը գիտեի քիչ մը, շատ անգամ լսած եմ, բայց չեմ հիշեր թե ի՞նչ ըսել է:

ՕԳՍԵՆ – Անգղիերեն՝ սիրքըմսդանս ադդենույընթ:

ՊԱՂՏԱՍԱՐ – Հայերեն հասկցո՞ւր սա անպիտանը:

⁶ Ա. Տերտեղյան, Հայ կլասիկներ, Եր., 1944, էջ 303:

ՕԳՄԵՆ – Նրբացուցիչ դեպք հանցանաց, այսինքն հանգամանքներ, պարագաներ, որ հանցանքը կը մեղմացնեն, կը թեթևցնեն, կը պզտիկցնեն. մեղմացուցիչ պարագաներ կամ լավ նս պատճառներ, զորս հանցավորը կը փնտռե պատիժը թեթևցնելու, պզտիկցնելու համար:

ՊԱՂՏԱՍԱՐ – Մանկ չըսե՞ս, հասկցա»⁷:

Հեշտ չի եղել, սակայն, վերոբերյալ պատկերի ստեղծումը. դրան նախորդել են երգիծաբանի խոր դիտողականությունն ու մտքի անսովոր լարումը մինչև այն պահը, երբ, ինչպես քիչ հետո կտեսնենք, բանասիրական բանավեճից տրոհված «միջուկը» «հանկարծ» դարձել է ստեղծագործության ամենազավեշտալի ու տպավորիչ դրվագներից մեկը: Պարոնյանն այդ ընթացքում իրարից հստակ գատել է հրապարակագրությունն ու գեղարվեստը, թույլ չի տվել առաջինի «ներխուժումը» դեպի պիես՝ այն այդպես էլ թողնելով լրագրական երգիծապատումի սահմաններում:

Իսկ ո՞րն էր «Պ. Նորայրի «Նրբացուցիչ դեպք»»-ը, և ինչի՞ մասին է ակնարկում գրադատը, որի նախապատմության իմացությունը, հիրավի, բնավ անհրաժեշտ չէ սովորական ընթերցողին կամ հանդիսատեսին, բայց կարևոր է գրականագետի համար՝ ընկալելու Պարոնյանի ստեղծագործական վարպետության նրբությունները:

Ֆրանսերենի քաջահայտ երկու գիտակների՝ Նորայր Բյուզանդացու (1844-1916) և Մեսրոպ Նուպարյանի (1842-1929) միջև 1884-ին ծայր են առնում տևական սուր բանավեճեր: Պատճառն առաջինի՝ 1884-ին հրատարակված ֆրանսերեն-հայերեն բառարանն էր⁸: Երբ այն տարակարծություններ է առաջացնում արևմտահայ գրական շրջանակներում և խստորեն քննադատվում, հեղինակը թիրախավորում է գրչընկերոջ՝ Մ. Նուպարյանի՝ Վիկտոր Հյուգոյի «Փարիզի Աստվածամոր տաճարը» («Notre-Dame de Paris», 1831) եռահատոր վեպի հայերեն թարգմանությունը⁹: Շուտով դրան հաջորդում է պատասխանը. վրդովված թարգմանիչն իր «Մխալներու խնդիր» հոդվածում նախ արդարանում է, որ թարգմանությունը կատարվել է տասնչորս տարի առաջ, և այդ ընթացքում բնական են լեզվամտածողության փոփոխությունները, հետո քննադատում է Ն. Բյուզանդացու բառարանը՝ հիշեցնելով, որ այն սխալաշատ է և մեծ դժգոհություն է առաջացրել մտավորականության շրջաններում. «Այն անձը որ աններելի թափ մը յայտնելով՝ յախուռն

⁷ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու տասր հատորով, հ. 1, Եր., 1962, էջ 312-314:

⁸ Տե՛ս Ն. Բիւզանդացի, Բառագիրք ի գաղղիերէն յեզուէ ի հայերէն հետետողութեամբ բառարանացն Եմիլ Լիդրէի եւ գաղղիական ակադիմիայ, Կ. Պոլիս, 1884, 1298 էջ:

⁹ Տե՛ս Վ. Հիւկօ, Նօդր-Տամ Բարիզի, Չմիտնիա, 1871-1872; Ն. Բյուզանդացին առանձին տետրակով քննադատում է այս հրատարակությունը (տե՛ս Ն. Բիւզանդացի, Քննադատութիւն Նուպարեան թարգմանութեան Վիքթօր Հիւկօյի «Նոդր Տամիս», Կ. Պոլիս, 1884, 31 էջ):

զարկած էր աջ և ահեակ, և որ այնքան նախատած էր և կը նախատէ տակաւին զմեզ, *Մասիսի*, Գրասէր Ատումի, *Աշխարհաբարեանի*, *Երկրագունտի*, *Խիկարի* և վերջապէս *Ար. Մամլոյ* կողմէ տեղացած հարուածներու առթիվ գառնուկի հեգութիւն և Քրիստոսի խոնարհութիւն կը յայտնէր աշխարհի»¹⁰: Բանավեճն այնուհետև տեղափոխվում է «Մասիս» լրագիր, ուր «Բառգիրքներու առթիվ» խորագրի տակ Ն. Բյուզանդացին հարց ու պատասխանի տեսքով կետ առ կետ պաշտպանում է իր բառարանը՝ նկատելով, որ «յօդուածագիրն շատ բան ցուցնել ուզած է, բայց ոչինչ ցուցած է»¹¹:

Շատերի պէս Պարոնյանի հայացքից ևս չեն վրիպում արդէն գիտական պատշաճության սահմաններն անցնող կատաղի բանավեճերը: Նա «Խիկար»-ի՝ 1884-ի հունվարյան համարում «Երկու բառագիրներու վեճն հասարակաց կշռոյն մէջ» հողվածում հեզնանքով հարցնում է, թէ «ինչ կշիռով կշռելու է մեծանուն բառագրին երկասիրութիւնն որ այլասեռ ապրանքներ կը պարունակէ», և ապա իրեն հատուկ սրամտությամբ, բայց և անաչառությամբ Ն. Բյուզանդացու բառարանի մասին գրում է. «Տարակոյս չկա թէ մեծանուն բառագրին քսանամեայ քրտանց արդիւնքն առաւելութիւններ ունի իւր նախորդաց վրայ և ինքն ամեն քաջալերութեան արժանի է: Կը յարգենք զինքն և մենք իբրև քաջ հայերէնագէտ և գաղղիերէնագէտ, բայց չենք հաւանիր բնաւ որ իբր այն իրաւունք ունենայ ուրիշներուն հայիոյելու և կամ կարծելու թէ իւր բառարանն ուրիշ բառարաններու վրայ առաւելութիւն պիտի ունենայ միշտ. որովհետև հայերէն և ֆրանսերէն լեզուաց հմտութենէ զատ դեռ բազում գիտութեանց ծանօթութիւն կը պահանջուի բառագրէ մը, նամանաւանդ այն բառագրէն որ հրապարակի վրայ կը յոխորտայ աղակելով թէ ոչ ոք կարող է ինձ հաւասարիլ բառագիտութեան մեջ»¹²:

Անցնելով բուն խնդրին՝ նկատենք, որ 1886-ի օգոստոսին Ադրիանուպոլսում գտնվող Պարոնյանը «Խիկար» հանդեսի՝ մի միջոց ընդհատման և տպագրությունը վերստին շարունակելու պատճառների մասին պարբերականի հենց սկզբում («Յայտարարութիւն») գրում է.

«Ահաւաղիկ *Խիկարի* ընդհատման *նրբացուցիչ դէպք յանցանաց*.

Ահաւասիկ անոր վերստին հրատարակութեան համար մեր *հաստացուցիչ դէպք յանցանաց*»¹³:

Ինչպէս նկատելի է, հանդեսի վերահրատարակման հենց սկզբում երկու անգամ հիշատակվում է մեզ հետաքրքրող արտահայտությունը՝ երգիծաբանի իսկ ընդգծմամբ: Ի դեպ, դա «Խիկար»-ի այն համարն էր, որտեղ սկսվում էր «Պաղտասար աղբար»-ի տպագրությունը: Բացի այդ՝ Պարոնյանը չի բավարարվել դրանով և նորից նույն համարում

¹⁰ «Արևելք», լրագիր, Կ. Պոլիս, 1884, թիվ 221, 27 սեպտեմբեր/9 հոկտեմբեր:

¹¹ «Մասիս», լրագիր, Կ. Պոլիս, 1885, թիվ 3795, 9 նոյեմբեր, էջ 139-144:

¹² «Խիկար», 1884, հունվար, էջ 25-26:

¹³ Նույն տեղում, 1886, օգոստոս, էջ 3:

«Դարձեալ երկու բառագրեր» մանրապատումի մեջ, անդրադարձել է երկու բառարանագիրների բանավեճերին՝ բարեխղճորեն արձանագրելով զանազան պարբերականներում դրանց հրապարակման անզամ տարեթվերն ու ամսաթվերը. «Պ. Մեսրոպ Նուպարեան 1884 սեպտ. 27ին Պ. Նորայր Բիզանդացոյ դէմ յօդուած մը կը հրատարակէ **Արեւելքի** մէջ: 1885 նոյեմբեր 3ին **Մասիսի** մէջ կը պատասխանէ Պ. Նորայր Բիզանդացի առ Մ. Պ. Նուպարեան: Մա 1886 Մայիսի **Արեւելեան Մամլոյ** յաւելուածով մը և **Նորայրեան Բառարանի սխալները** մակագրով կը քննադատէ Պ. Նորայրի բառարանն, Պ. Նորայր **Փունջի** մէջ կը խնդայ այս քննադատութեան վրայ գոր տգիտաբանութիւն և ոչնչաբանութիւն կանուանէ և որուն ի մօտոյ պատասխանել կը խոստանայ»¹⁴:

Մի խոսքով՝ անվերջ խայթոցներ, բառարանային մարզանքներ, գլխապտույտ առաջացնող հարյուրավոր բառերի, այդ թվում՝ գրաբար և հին ֆրանսերէն արտահայտությունների անծայր մեկնություններ ու չիմացության կամ շփոթի փոխադարձ մերկացումներ... Ապշեցուցիչ դիտողականությամբ երգիծաբանն այդ ամենի մեջ, սակայն, որսում է տպավորիչը՝ ամենազավեշտալին՝ այն մարմնավորելով մի դեպքում գեղարվեստական, մյուս դեպքում՝ հրապարակագրական երկերում: Մ. Նուպարյանի «Նորայրեան բառարանի սխալները» գրքույկում, օրինակ, հանդիպում ենք երկու ուշագրավ հատվածների. ահա առաջինը. «Մեծ բառագիրն ու հայկաբանը (Ն. Բյուզանդացին – Ալ. Մ.) կը դնէր. Ստուար հասակ, Ստուարանալ հասակի. Նրբացուցիչ (Atténuant) (յանցանք՝ դէպք), Գրքի էջերու (չէ թէ երեսներու) Միւն. (այս սխալը **սրբագրեալ** Բառարանի մէջ երեք տեղ ևս կրկնուած է)»¹⁵, և երկրորդը. «Քաջ բառագիրն իրմէ ընդունուած հին տառադարձութեան մը կանոններու միայն ուշադիր՝ և կոյր ստուգաբանութեան մը կամ մոռցած գործածութենէ ելած սկզբնական անուններու վրա հիմնուելով կը դնէ... Seringue (Գրեխ), Սրինգ...»¹⁶:

Ակնհայտ է, որ դրանցից առաջինը տեղ է գտել Պարոնյանի կատակերգության, երկրորդը, աղերսվելով նախորդին, նրա լրագրական մանրապատումի մեջ:

Եվ ահա երգիծաբանն արդեն հիշատակված «Դարձեալ երկու բառագրեր» հոդվածում ինքնատիպ գրաբարով ծաղրում է Ն. Բյուզանդացու կողմից «սրինգ» և «գրեխ» («հոգնա») բառերը իբրև հոմանիշներ ներկայացնելը: Եվ հենց այստեղ պայթում է անզուսպ ծիծաղը սրածայրությամբ միավորվող, բայց միանգամայն տարբեր նպատակների համար գործածվող առարկաների առիթով. «**Խիկար**, իբրև կարիբարի, և

¹⁴ Նույն տեղում, էջ 28:

¹⁵ Մ. Նուպարեան, Նորայրեան բառարանի սխալները, Զմիւռնիա, 1886, էջ 13: Տե՛ս նաև՝ Ն. Բիզանդացի, Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն..., էջ 105 («Atténuant – 1. նրբացուցիչ, 2. յանցանաց դէպք»):

¹⁶ Մ. Նուպարեան, նշվ. աշխ., էջ 18-19: Տե՛ս նաև՝ Ն. Բիզանդացի, Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն..., էջ 1137 («Seringue – գրեխ ” սրինգ»):

գայս ասեմք ոլորակս եղեալի վերայ կարիքարոյ և քաջոլորակի, ուժգնակի ոգեալ զբառն գայն, անհամբեր մնայ ունկնդիր լինել **դիպաց նրբացուցաց մեղացն** գոր գործէ Պ. Նորայր Բիւզանդացի, հոմանիշ ընծայելով զբառսդ *սրինգ* և *գրէխ*, յորս պակասի միութիւն տեղոյ:

Երա նի առն այնմիկ ոյր բերան կարէ հնչեցուցանել զերկոսին գործիս վերոգրեալս, կարգեալս ի պաշտամունս հակառակ միմեանց, և այնու և եթ փչել զջերմ և զցուրտ և ազատել զայծն և զկաղամբ և զթարգմանիչս»¹⁷:

Ինչպէս տեսնում ենք, պարոնյանական այս ժլատ հիշատակութիւնն ունի ընդհանրացման ուժ, շատ ավելի խոսուն է ու սպանիչ, քան տարիներ տևող անհեթեթ բանավեճերը: Եվ ականա մտաբերում ես նաև «Ազգային ջոջեր»-ի՝ Կարապետ պեյ Երամյանի մասին գրված կարճատև, բայց սպանիչ նախադասությունը՝ «Սզկիթ մը շինել տված է»¹⁸, որը հավասարագոր է մեծահարուստ հայ ամիրայի՝ ապագային, քաղաքական ստորաքարշությունը քննադատող մի ամբողջ տրակտատի:

Ամփոփելով նկատենք, որ «Պաղտասար աղբար» կատակերգութիւնի առաջին գրախոսությունից քաղված ակնարկի քննությունն ու բանասիրական ճշգրտումը լույս է սփռում պիեսի երգիծական մթնոլորտն աննախադեպ աշխուժացնող **«նրբացուցիչ դեպք հանցանաց»** դարձվածքի ստեղծման պատմության վրա: Այն մի կողմից վկայում է Պարոնյանի բացառիկ դիտողականության, մյուս կողմից գեղագիտական բարձր ճաշակի մասին և այսօր օգնում մեզ՝ նոր ընթերցմամբ ընկալելու երգիծաբանի արվեստի գայթակղիչ փորձը:

Բանալի բառեր – *Հակոբ Պարոնյան, «Պաղտասար աղբար» կատակերգություն, դրամատուրգիա, առաջին գրախոսություն, «Եսթեր», Մաքսուտ Մանտալձյան, «նրբացուցիչ դեպք հանցանաց», Նորայր Բիւզանդացի, Մեսրոպ Նուպարյան, բանավեճ*

АЛЬБЕРТ МАКАРЯН – *Филологическое уточнение в связи с пьесой «Дядюшка Багдасар»*. – В статье вносится уточнение по поводу словесного оборота «смягчающее обстоятельство», который фигурирует в известной комедии Акопа Пароняна. Из смутного намёка в первой рецензии на публикацию пьесы выясняется, что в продолжительной полемике своих современников, лексикографов и прекрасных знатоков французского языка Нораира Бузандаци и Месропа Нубаряна, драматург обнаружил забавную ошибку. Обыграв её, он создал один из самых эффектных и курьёзных эпизодов комедии. Наблюдение над ним приводит к выводу, что Паронян разграничивал искусство и публицистику и не допускал газетную сатиру в свои произведения.

¹⁷ **«Խիկար»**, 1886, օգոստոս, էջ 28: Հաշվի առնելով մեջբերված զավեշտախառն գրաբար հատվածի բարդ բնույթը՝ ներկայացնում ենք դրա աշխարհաբար թարգմանությունը. **«Խիկար**, իբրև հույժ բարի, և այս ասում ենք բացականչական նշաններ, շեշտադրություն դնելով հույժ բարիի վրա, ուժգանակի արտասանելով այն բառը՝ անհամբեր մնում է ունկնդիր լինել **մեղքերի նրբացուցիչ հանգամանքներին**, որ գործում է պրն. Նորայր Բիւզանդացին՝ հոմանիշ դարձնելով այս *սրինգ* և *գրէխ* բառերը, որոնց մեջ պակասում է տեղի միասնությունը: Երանի այն մարդուն, որի բերանը կարող է հնչեցնել վերը գրված այս երկու գործերն էլ՝ միմյանց հակառակ պաշտամունք կարգելով և դրանով ևեթ փչել ջերմ ու ցուրտ և ազատել այծին, կաղամբն ու թարգմանիչներին»:

¹⁸ **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 2, Եր., 1964, էջ 224:

Ключевые слова: Акоп Паронян, комедия «Дядя Багдасар», драматургия, первая рецензия, «Естер», Максут Санталчян, «смягчающее обстоятельство вины», Норайр Бюзандийский, Месроп Нупарян, полемика

ALBERT MAKARYAN – A Philological Clarification in Regard to “Uncle Baghdasar”. – The aim of the present publication is to carry out a philological clarification related to the history of the emergence of the famous phrase of “mitigating circumstance” that has a significant place in the comedy “Uncle Baghdasar” by Hakob Paronyan. By relying on a vague hint expressed in the first review of the above mentioned play written several decades ago it is revealed through an actual material that the author of the comedy had caught a funny mistake from the long debate between the two well-known lexicographers and experts of French language, i.e., Norayr Byuzandatsi and Mesrop Nuparyan and had made it one of the most ridiculous and impressive episodes of his work.

The study concludes that Paronyan has distinctly separated the publicity and fiction and hadn't let the first one to “intrude” into the play and thus left it within the limits of satirical journalism.

Key word: *Hakob Paronyan; comedy “Uncle Baghdasar”; playwright; first review; “Esther”; Maksut Santalchyan; “mitigating circumstance”; Norayr Byuzandatsi; Mestrop Nuparyan; debate*

Ներկայացվել է՝ 16.10.2018, գրախոսվել է՝ 11.02.2019, ընդունվել է տպագրության՝ 07.03.2019